

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի լեզուների ամբիոնի ստեղծման պատմությունը

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի լեզուների ամբիոնը ձևավորվել է 1992թ. և կոչվել է լեզուների և մշակույթի ամբիոն (հրաման N 816 21.12.1992թ. կազմ-հաստիքային հարցերով ՀՀ ՆԳՆ բարձրագույն դպրոցում լեզվի ամբիոն կազմակերպելու վերաբերյալ):

1992 - 1995թթ. ամբիոնի պետ՝ հոգեբանական գիտությունների թեկնածու Անուշ Համբարձումի Օհանյան:

1995 թվականի նոյեմբեր ամսից ամբիոնը վերանվանվել է լեզուների ամբիոն: 1995-2003թթ. ամբիոնի պետ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրեֆեսոր Վազգեն Հմայակի Սաֆարյան:

2003-2009թթ. համատեղության կարգով լեզուների ամբիոնը ղեկավարել է ակադեմիայի պետի՝ գիտությունների գծով տեղակալ, բանասիրական գիտությունների թեկնածու Արմեն Պարոյրի Ղազարյանը:

2009 թվականին (24.11.2009թ. թիվ 3003-Ա հրաման) լեզուների ամբիոնի պետ է նշանակվել նույն ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության փոխգնդապետ Աղավնի Ալեքսանդրի Հայրապետյանը, որը մինչև օրս ղեկավարում է ամբիոնը: Ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Աղավնի Ալեքսանդրի Հայրապետյանն ամբիոնում աշխատում է 1994 թվականից: Նա մինչև 1996 թվականը աշխատել է որպես պայմանագրային դասախոս, 1996 թվականին՝ որպես հաստիքային դասախոս, այնուհետև՝ ավագ դասախոս:

2011 թվականին (22.07.2011թ. թիվ 1871-Ա հրաման) հասարակագիտական առարկաների ամբիոնը միավորվել է լեզուների ամբիոնին և ամբիոնը կոչվել է լեզուների և հասարակագիտական առարկաների ամբիոն, որը ղեկավարել է ամբիոնի պետ Աղավնի Հայրապետյանը:

2013 թվականին (27.06.2013թ. թիվ 2123-Ա հրաման) հասարակագիտական առարկաների ամբիոնը կրկին առանձնացել է և ամբիոնը վերանվանվել է լեզուների ամբիոն (ամբիոնի պետ՝ Աղավնի Հայրապետյան):

Ներկայումս լեզուների ամբիոնն ունի 5 հաստիք.

1. ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Աղավնի Ալեքսանդրի Հայրապետյան
2. դոցենտ, ոստիկանության գնդապետ Ռոզա Լևոնի Մուսայելյան
3. ավագ դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, ոստիկանության մայր Գալինա Ալեքսանդրի Ռուսակովա
4. դասախոս, ոստիկանության մայր Աննա Միքայելի Եղոյան
5. դասախոս, ոստիկանության կապիտան Մարիամ Ժիրայրի Առաքելյան

Ամբիոնի գործունեության հիմնական ուղղություններն են կրթական, ուսումնամեթոդական և դաստիարակչական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, դասագրքերի, ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնագործական

ձեռնարկների, գրուցարանների, գիտաուսումնական հոդվածների կազմումն ու հրատարակումը:

Ամբիոնին կից գործում են անգլերենի և ֆրանսերենի ակումբներ, հայերենի և պարսկերենի ֆակուլտատիվ պարապմունքներ:

Ամբիոնն ակտիվ մասնակցում է կրթահամալիրի կողմից իրականացվող կրթության որակի բարձրացման քաղաքականությանը և ռազմավարական ծրագրին:

Ամբիոնը համագործակցում է Հայաստանում Բրիտանական խորհրդի հայկական Ալիանս ֆրանսեզի, Երևանի պետական համալսարանի, Ամերիկյան համալսարանի և Սլավոնական համալսարանի, Գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի (РЦНХ) հետ: Ամբիոնի աշխատակիցները պարբերաբար մասնակցում են վերջիններիս կազմակերպած գիտական կոնֆերանսներին, վերապատրաստման և կատարելագործման դասընթացներին և ստացել են համապատասխան հավաստագրեր:

Ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Ա.Հայրապետյանը 2018թ. մասնակցել է ֆրանսերեն դասավանդողների համաշխարհային կազմակերպության 50 ամյակին նվիրված «Ֆրանսերեն սովորելը նաև հաճելի է» լուսանկարների մրցույթին և ճանաչվել է 12 հաղթած երկրների մասնակիցներից մեկը: Մեր սովորողների լուսանկարը հայտնվել է վերոհիշյալ կազմակերպության 2019թ. օրացույցի օգոստոս ամսվա էջում:

Ամբիոնի աշխատակիցների կողմից պարբերաբար կազմակերպվել են մշակութային միջոցառումներ աշխատակիցների և սովորողների համար:

Ամբիոնի պետի կողմից կազմակերպվել են կլոր սեղան քննարկումներ անգլերեն լեզվով մասնագիտական բառապաշարի շրջանակներում:

Ներկայումս ամբիոնում տպագրության համար պատրաստ են նոր ձեռնարկներ, բրոշուրներ և հոդվածներ:

2015-2018թթ. ամբիոնը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի կողմից ճանաչվել է գիտական գործունեության լավագույն արդյունքներ գրանցած առաջատար ամբիոնների շարքում:

Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, գիտական աշխատանքներ

Ամբիոնի աշխատակիցների կողմից հրատարակվել են.

1. 2001 թվականին՝ հայերեն – անգլերեն, անգլերեն – հայերեն իրավաբանական բառարան. ամբիոնի դասախոս Սամվել Վասիլի Վարդանյան
2. 2002 թվականին՝ թելադրությունների ձեռնարկ. ամբիոնի դասախոս Արմեն Պարոյրի Ղազարյան
3. 2008 թվականին՝ English for the Police Academy. ամբիոնի դասախոս Աղավնի Ալեքսանդրի Հայրապետյան

4. 2012 թվականին՝ հայերեն – անգլերեն, հայերեն – ֆրանսերեն, հայերեն – ռուսերեն զրուցարան ուսուցանության ծառայողների համար. ամբիոնի պետ Աղավնի Ալեքսանդրի Հայրապետյան
5. 2013 թվականին՝ հայերեն – անգլերեն զրուցարան Արտակարգ իրավիճակների նախարարության ծառայողների համար. ամբիոնի պետ Աղավնի Ալեքսանդրի Հայրապետյան, ամբիոնի դասախոս Մարիամ Ժիրայրի Առաքելյան
6. 2013 թվականին՝ հայոց լեզվի ուսումնամեթոդական ձեռնարկ. ամբիոնի դեցենտ Ռոզա Լևոնի Մուսայելյան
7. 2015 թվականին՝ Քրեական աշխարհի ժարգոն և դաջվածքներ. ամբիոնի դեցենտ Ռոզա Լևոնի Մուսայելյան և ամբիոնի պետ Աղավնի Ալեքսանդրի Հայրապետյան
8. 2017 թվականին՝ հայերեն – պարսկերեն զրուցարան ուսուցանության ծառայողների համար. ամբիոնի պետ Աղավնի Ալեքսանդրի Հայրապետյան, պարսկերենի դասախոս Հայկ Սողոմոնյան
9. 2018 թվականին՝ հայերեն – ֆրանսերեն զրուցարան ուսուցանության ծառայողների Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովի համար. ամբիոնի պետ Աղավնի Ալեքսանդրի Հայրապետյան
10. 2019 թվականին՝ Русский язык ուսումնագործնական ձեռնարկ. ամբիոնի ավագ դասախոս Գալինա Ալեքսանդրի Ռուսակովա

Ամբիոնի անձնակազմի կողմից հրապարակվել են ավելի քան 30 գիտական հոդվածներ, ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի, Բելառուսի և այլ երկրների առաջատար ամսագրերում: